



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25



69/52 Կ. 45

Պրօլետարինե՞ր բոլոր նրկոների, միացէք:

3(02)

Հայաստանի կոմ. կուսակց. Ալեք-պօլի  
կազմակիրպութիւն.



# ԿՈՍՈՎԻ ՆԻՒՏԻ ԷՒ ԱՅԲԵՆԱՐԱՆ

Թարգմ. ռուսերենից ՆԱՀԱԳԵՏ

սեռ. 16.9.57

Հրատարակութիւն գաւկոմի

Ալեք-պօլ 1921 թիւ  
Հ-ըդ Խորհրդային տպարտն.



45-2621

## I. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ – ԶՐՈՅՑ

Կապիտալիստական հասարակութիւնը՝ Դասակարգեցրել և դասակարգային կորիւը։ Դասակարգեցրել և պետական իշխանութիւնը։ Դասակարգեցրել և կուսակցութիւններ։ Կոմունիստական կուսակցութիւնը—կուսակցութիւն բանւոր դասակարգի։ Կոմունիզմն իբրև ապագասակարգային և ոչ պետական հասարակակարգ։

1. Միջաւ էլ մարդիկ ապրել են այնպէս, ինչպէս հիմա են ապրում։

ՌՀ։ Այն կարգը, որը գեռ ևս տիրապետում է բոլոր զարգացած երկրներում—բացի Խորհրդայիր երկրներից—և կոչում է կապիտալիստական՝ գոյութիւն ունի այն ժամանակից, երբ երեան եկան գաւօդներ և գործարաններ։ Առաջ գոյութիւն ունէր ճորտատիրական կարգ, աւելի առաջ—ստրկատիրական և հին ժամանակներում մարդիկ ապրում էին իբրև վայրենիներ։

2. Ո՞ր կարգն է կոչում՝ կապիտալիստական։ Այն կարգը, որտեղ արտադրութեան բա-

լոր միջոցները, այսինք՝ գործարանները և զաւողները, հանքերը, երկաթուղիները, հողը և այլն... գտնւում են մասնաւոր սեփականատէրերի, կապիտալիստների ձեռքում:

3. Միթէ իրենք կապիտալիստներն են աշխատում:

Ո՞չ! Ստիպւած են աշխատելու միայն նրանք, որոնք չեն տիրապետում արդիւնաբերութան միջոցներին: Դրանք են — պրօլետարները, որոնց քաղցնէ ստիպում վարձւել կապիտալիստներին:

4. Ի՞նչու ին կապիտալիստները վարձում պրօլետարներին:

Նրանք համար, որպէսզի շահագործեն նրանց: Բանւորը օրական աշխատում է 12, 13, 14 և աւելի ժամ կապիտալիստի համար, արտադրում է հսկայական արժէք ունեցող ապրանքներ, իսկ վարձ ստանում է իր 3—4 ժամւա աշխատանքի համար, մի վարձ, որը հազիր է նրան հնարաւորութիւն տալիս իր գոյութիւնը պաշտպանելու:

5. Միթէ կապիտալիստները պէտք ունեն այդշափ մեծաքանակ ապրանքների:

Այո՛: Իհարկէ նրանք իրենք չեն գործադրում այդ բոլորը: Բայց իբրև ապրանք նրանք շուկայում փոխում են փողի և ուրիշ սթերքների հետ: Ինչպէս օր հում նիւթը, մեքենաները, տները և այլ արտադրութեան միջոցները:

6. Կապիտալիստական հասարակութիւնը կազմում է մի ամբողջութիւն։

Ո՞չ նա կազմւած է բոլորովին իրարից տարբեր մասերից՝ երկու հիմնական դասակարգերից՝ բուրժուական—Փարքիկանտներ, բանկիրներ, կալւածատէրեր, և պրօլետարական—աշխատաւորներ՝ զուրկ որևէ է սեփականութիւնից։

7. Բացի բուրժուազիայից և պրօլետարիատից էլ Բնշ դասակարգեր դոյլութիւն ունին։ Մանը սեփականատէրերի, որոնք են՝ բազարի մանը բուրժուազիան, մանը առնարականները, ինտելիգենցիան և... յատկապէս մեզանում՝ Ռուսատանում դիւզացիութիւնը (կուլակները և միջակները)։

8. Մի՞թէ բոլոր դասակարգերի շահերը միատեսակ են։

Ամեննեին ոչ։ Այսպէս՝ բուրժուազիայի և պրօլետարիատի շահերը բոլորովին հակազիր են։ Առաջինի շահն է շահագործել պրօլետարիատին. երկրորդի՝ ազատւել բուրժուազիայի շահագործումից։

9. Ինչ է բղխում դասակարգերի շահերի այս հակազրութիւնից։

Դասակարգային կռիւ. Եւրաքանչիւր դասակարգ պաշտպանելով իր շահերը՝ յարձակում է միւսի վրա և ճնշում է նրան։

10. Դասակարգային կռում ի՞նչի վրա է հենւում կապիտալիզմը։

Կապիտալիստական պետութեան վրա, է-սինքն այն կազմակերպութեան, որը բուրժւա-ղիային ապահովում է բանուրութեան ապստամ-բութեւնից, և կռւում է միւս կապիտալիստա-կան պետութիւնների հետ՝ թալանի բաժանման գործում:

11. Կապիտալիստական պետութեանը ինչ կերպ է յաջողւում իր իշխանութեան տակ պա-հել պրօլետարիատին:

Բոնի ուժի միջոցով՝ բանակի, պօլիցիայի, դատարանի, բուրժւաղիայի զեկավար զիներալ-ներով և խարւած զինուորներով, պրօլետարիա-տի մտքի լրումով, դպրոցների, եկեղեցու և բուրժւական մամուլի միջոցով:

12. Ի՞նչով է արտայայտում դասակարգային կոիւը:

Որովհետեւ դասակարգային ճնշման զէնքն է հանդիսանում պղտական իշխանութիւնը, զրա համար էլ դասակարգերի ամբողջ կոիւը տանում է զէպի կոիւ՝ իշխանութեան բոնադրաւման և պետական իշխանութեան ամրապնդման համար:

13. Ո՞վ է զեկավարում տւեալ դասակար-գի պայքարը:

Քաղաքական կուսակցութիւնը, որի մէջ ևն մտնում նրա ամենազիտակից և տոկոն ներ-կայացուցիչները, կուսակցութեան մէջ որքան բարձր լինին նրանցից իւրաքանչիւրի անհա-

տական յատկութիւնները, այնքան աւելի է մօ-  
տենում ամրող դասակարգի յաղթանակը:

14. Ի՞նչ է անում կուսակցութիւնը իր առ-  
ջև դրած խնդիրները իրականացնելու համար:

Մատնանշում է կուսակցութեան նպատա-  
կը, դրա ճանապարհը՝ տակտիկան—միացնում  
է իր անդամներին, կազմակերպում է նրանց,  
առաջնորդում է նրանց յարձակումների ժամա-  
նակ: Կուսակցութիւնը իր հոգով, (իդեալներով)  
իր կազմակերպութեամբ և դիսցիպլինայով ու-  
ժեղ է և յենարան իր դասակարգի կողմից:

15. Ի՞նչպէս են բաժանւում կուսակցու-  
թիւնները:

2նայած այն բանին, որ բոլոր երկրներում  
էլ գոյութիւն ունին բազմաթիւ կուսակցութիւններ տարրեր անուններով, բարձր սրանք բոլո-  
րը իրենց էութեամբ բաժանւում են եղեք մասի:

ա. բուրժւական, բ. մանր — բուրժւական գ.  
պրօլետարական կուսակցութիւններ:

16. Ի՞նչ բուրժւական կուսակցութիւններ  
գոյութիւն ունեն Ռուսաստանում:

1) Վաղետների կամ „Ժողովրդական ազա-  
տութեան“ կուսակցութիւն (բուրժւագիայի հա-  
մար—ազատութիւն պրօլետարիատին շահազոր-  
ծելու համար) 2) Ռուսաց ազգի միութիւն, 3)  
Հոկտեմբերեաններ և այլն, որոնք ձգտում էին  
կապիտալիստական կամ հողատիրական իշխա-  
նութեան ամրապնդմանը:

17. Ի՞նչ մանը բուրժւական կուսակցութիւններ կան:

1) Մենշևիկների կուսակցութիւնը (Ռ. Ս. Դ. Բ. Կ.), 2) էսերների (Սոցիալիստ յեղափոխականների), 3) Էնեսով (Փողովրդական սոցիալիստների), որոնք բոլորն էլ խօսքով ընդունում են կապիտալիստական հասարակարգի խորտակումը, բայց գործով գնում են բուրժւագիտի համաձայնութեամբ։ (Կերենսկի, Պոլչակ, Դենեկին):

18. Ա՞րն է պրոլետարական կուսակցութիւնը։

Ռուսաստանի Կոմունիստական կուսակցութիւնը (բոլշևիկների), որը ոչ թէ միայն խօսքով, այլ նաև գործով ձգուում է կապիտալիստական հասարակարգի խորտակմանը և նոր կոմունիստական հասարակարգի իրականացմանը Բոլոր երկըներում էլ կոմունիստական կուսակցութեան համար չկա համաձայնութիւն բուրժւագիտի հետ, այլ գոյութիւն ունի անողոքութիւն նրա դէմ (օր. Գերմանիայում—Սպարտակովցիները)։

19. Ի՞նչպէս է դրւելու կոմունիստական հասարակարգի հիմքը։

Նրանում չպէտք է լինի շահագործում։ Նրա հիմքը պէտք է լինի արտադրութեան բոլոր միջների համայնացումը, որը պէտք է դառնա

ամբողջ մարդկային հասարակութեան սեփական-նութիւնը՝ անհատնեցի մասնաւոր սեփականութեան հետ միասին։

20. Կոմունիստական հասարակաբազում արդեօք լինելու են դասակարգեր։

Աշ. Արտադրութեան միջոցների համայնացումը ոչնչացնում է մարդկութեան բաժանումը երկու իրար հակառակը, թշնամի, դասակարգերի, որից մէկը ճնշում է միւսին։ Չի լինելու ոչ բուրժուազիա և ոչ էլ պրոլետարիատ, այլ բոլոր մարդիկ դառնում են աշխատաւորներ, ընկերքաղաքացիներ։

21. Կոմունիզմի ժամանակ գոյութիւն ունենալու է պետութիւն։

ԱՇ, նա կմոռնի։ Ընորհիւ դասակարգերի բաժանման բացակայութեան, պետութիւնը, որ գինը էր մի դասակարգի համար միւսի դէմ, կըս-ւելու պէտքանա և կանհետանա։

## II ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ – ԶԲՈՅՑ

Կապիտայիզմից դէպի կոմունիզմ

Արտադրութեան անարխիա։ Մըսում և խոշոր կապիտալի դերը։ Կապիտալիստների միութիւն (իմպերիալիզմ)։ և բանտորների միութիւն։ Եմպերիալիզմ։ Պատերազմ։ Կապիտայի անկումը։ Մեցողակի շրջան։ Կոմունիզմի իրեն կազմակերպւած հասարակութիւն։

1. Ի՞նչ է արտադրութեան անարխիան:

Հնայելով որ իւրաքանչիւր կապիտալիստական ձեռնարկութիւն առանձին կազմակերպւած է լաւ, բայց հասարակութեան մէջ չկա անտեսական մի պլան՝ արտադրութեան մէջ գոյութիւն ունի անսկիզր անարխիա:

2. Ամենից առաջ ինչումն է կայանում արտադրութեան անարխիան:

Մըսման մէջ: Իւրաքանչիւր կապիտալիստ ձգտում է գնել հում նիւթ և գարձել էժան բանւորական ուժ, արդինարերել աւելի մեծաքանակ ապրոնք և ծախել թանգ: Այսպիսով կապիտալիստների մէջ առաջանում է կոփւ, էժան հում նիւթերի, բանւորական ձեռքերի և գնողների համար:

3. Ո՞րոնք են մըսման հետեանքները:

Մանր ձեռնարկութիւնների ոչնչացումը և խոշորների ուժեղացումը: Խոշորֆաբրիկանտին, իր նոր մերենաներով, ապահովւած շէնքերով, հում նիւթերով, վառելիքով և արտադրութեան բոլոր միւս կողմերով արտադրութիւնը էժան է նստում, որի շնորհիւ էլ նա զրաւում է գնողներին և ոչնչացնում մանր ձեռնարկութիւնները:

4. Խոշոր ձեռնարկութիւնների համար՝ արդեօք մըցումը կորստաբեր չի:

Մըսման համար էլ կործանարար են հետեւանքերը — տնտեսական կրիզիսները: Կապիտա-

լիստները, ձգտելով աւելի մեծ ճնշման, արտադրում են այնքան շատ ապրանք, որ զնողենքը գրանց համար չեն բաւականացնում։ Այն ժամանակ կապիտալիստները մէկ առ մէկ ստիպւած են լինում կանգնեցնել ձեռքարկութիւնը—միաժամանակ մեծացնելով անդործների թիւը։

5. Ի՞նչպէս են պաշտպանում իրենց կապիտալիսներ՝ մըցման և կրիպտոների գէմ։

Նրանք միանում են միութիւնների մէջ (սինդիկատներ, տրեստներ) նրա համար, որ մէկը սիւսի ապրանքնդը գները չգցի, այլ միտսին թալաննեն։

6. Քանւորական ինչ միութիւններ էան։

Կապիտալիզմի դէմ կուելու համար բացի քաղաքական կուսակցութիւններից բանւորներն՝ ունեն արհեստակցական միութիւններ։ Միացնելով առանձին արհեստների բանւորներին, ձեռնարկելով գործադույի՛ նրանք առաջին հերթին պայքարում են աշխատավարձի բարձրացման, բանւորական օրւա կրծատման համար և այլն։

7. Ի՞նչպիսի մեծութեան են հանում կա, պիտալիստների միութիւնները։

Նախ՝ նրանք միացնում են ամբողջ արդիւնաբերութեան ձեռնարկութիւնները, երկրորդ սի երկրի ամբողջ արդիւնաբերութիւնը, և, վերապէս, միացնում են մի շաբք երկրների ար-

դիւնարերութիւնը։ Այսպիսի մեծ միութիւններ են՝ օրինակ Անտանտան (Անգլիայ, Ֆրանսիայի և Ռուսաստանի կապիտալիստների միութիւնը) և կենդրոնական միւս պետութիւնները (Գերմանիայի, Աւստրօ-Հունգարիայի և Ֆանկաստանի կապիտալիստները):

8. Ի՞նչ է լինում այդպիսի կապիտալիստական խոշոր միութիւնների գոյութեան արդիւնքը։

Այս, որ կապիտալիզմը համաշխարհային է դառնում առաջնաժին կապիտալիստների մրցման վկասարէն հիմա բռնկում է մրցում այդ խոշոր կապիտալիստական միութիւնների միջև աւելի ուժեղ չափով, որովհետև սրանցից իւրաքանչյիւրը ձգտում է խլել միւսից հում նիւթ, շուկաներ և ապրանքների սպառողներ։

9. Ի՞նչ բնոյթ է կրում այս մրցումը համաշխարհային շուկայում։

Զինւած պայքարի բնոյթ։ Որովհետև ամբողջ աշխարհը վազուցհետէ բաժանւած է առանձին պետութիւնների և միութիւնների։ Հում նիւթերի շուկաները խլել և սպառել ապրանքը հնարաւոր է միայն, երբ ուրիշի շըջանները ուժով միացւում են այդ պետական միութեան հետ։

10. Ի՞նչպէս է կոչում աշխարհը բաժանելու այս ձգտումը։

Իմպերիալիստական կապիտալիստական պետութիւնների մեծ միութիւնների բանագրաւելու պօլետիկան է այս՝ ամբողջ աշխարհը բռնագրաւելու համաշխարհային պետութիւն կազմելու համար, որտեղ թագաւորելու հն մի խումբ կապիտալիստներ-յաղթողներ:

11. Դէպի ուր է տանում իմպերիալիստական այս պօլիտիկան:

Դէպի միլիտարիզմ և համաշխարհային պատերազմ: Պետութիւններից իւրաքանչիւրը ուժեղացնում է իր բանակը, կատաղած՝ միւսին լափելու համար, չնայելով որ բանակի և զինման վրա ծախսւում են շշմեցուցիչ զումարներ: Հէնց այս է միլիտարիզմը: Իմպերալիստական պօլիտիկայի և միլիտարիզմի հետեանքով բոլոր ինքնականները բաղխւեցին համաշխարհային պատերազմում:

12. Համաշխարհային պատերազմում եղանակը պաշտպանող և յարձակող կողմեր:

Ո՞չ: Համաշխարհային պատերազմում բոլոր մասնակցողները յարձակողական էին: Ռուսական իմպերիալիստները տանում էին պատերազմը Կ. Պոլսի և Թալիցիայի համար, Գերմանականները՝ Ռուսաստանը թալանելու (Բրեստի հաշտութիւնը) և գաղութների համար (Աֆրիկայի և Ասիայի հարուստ շրջանները), դաշնակիցները՝ որպէսդի թալանեն Գերմանիան ամ-

բողջովին (Վերսալի հաշտութիւնը): Իսկ սրանք բոլորը խարեցին իրենց ժողովրդին «հայրենիքի պաշտպանութեան» լոգունգով

13. Ա՞ռնք են համաշխարհային պատերազմի հետևանքները:

Համաշխարհային քաղցը, թանգութիւն և քայլքայում: Պատերազմը տևեց 25 միլիոն սպանւածներ և հաշմանդամներ. պատերազմի ծախսերը հասան հսկայական գումարների, ամբողջ արդիւնաբերութիւնը աշխատեց պատերազմի համար, իսկ ամենաանհրաժեշտ ապրանքները քչացան: Հետևանքը՝ արդիւնաբերութիւնն ու գիւղատնտեսութիւնը ընկաւ: Տնայելով որ թրղթի վրա կնքւած էր «հաշտութիւն», բայց յաղթողների միջև դեռ ևս շարունակւում է աւարի բաժանման կորիւը, և կորիւ, որ կապւած է տընտեսութեան քայլքայման հետ: Հասաւ կապիտալիզմի կրիզիսը:

14. Ա՞մ բաժին ընկան այս բոլոր աղքատութիւնները:

Պրօլետարիատին: Նրան տանջեցին, լրեցիննա, բաղցած այդ մասսան ստիպւած էր վճարել անտանելի հարկեր, երբ պրօլետարիատը փորձում է բողոքել գործադուլներով, այն ժամանակ բոլոր երկրներում նա սկսում է ենթարկել հալածանքների: Հենց այս ժամանակ էլ կապիտալիստները ուղնացան զինւորական եկամուտների հաշւին:

15. Աշխատաւոր մասսաների համար ինչ  
հետեանքներ ունեցան այս բոլորը:

Նրանք գիտակցեցին, որ կոյք գործիք են  
կապիտալիստների ձեռքում և սկսեցին չեն-  
թարկել նրանց:

16. Ի՞նչի փոխւեց այն ժամանակ համաշ-  
խաբհային պատերազմը:

Քաղաքացիական կռւի. ծառացան շահա-  
գործւողները ընդդէմ շահագործողների: Մի շաբք  
երկրներում պրօլետարիատը փորձեց վերցնելու  
իշխանութիւնը իր ձեռքը. բանւոր դասակարգը  
պայքարում է ընդդէմ բուրժւական դասակարգի:  
Բանւոր-գիւղացիական Ռուսաստանի դէմ կռո-  
ւում են բոլոր երկրների իմպերիալիստները՝  
միացած ազգների լիգայում:

17. Ե՞րբ և ինչով կվերջանաքաղաքացիա-  
կան կռիւը:

Սյն ժամանակ, երբ բոլոր երկրներում  
կխորտակւի բուրժւագիայի իշխանութիւնը և  
յաղթող բանւորներն ու գիւղացիները կհիմնեն  
իրենց իրաւակարգը: Մըա համար պէտք է որ  
պրօլետարիատը իր ձեռքում պահի իշխանու-  
թիւնը և ամբողջ ուժը, պէտք է որ ժամանա-  
կաւորապէս նա լինի իշխող դասակարգը:

18. Ի՞նչ կերպ կիրականացնի պրօլետար-  
իատը իր դասակարգային տիրապետութիւնը:  
Պրօլետարիատի դեկտատուրայի միջոցով:

Բուրժւազիայի դաժան իշխանութեան (զիկտատուրայի) հանդէպ պրօլետարիատը կհիմնի իր գնկտատուրան որպէսզի նոր իրաւակարգի անցողական շրջանում ճնշի բուրժւազիայի դիմադրութիւնը։ Նրա նման էլ բուրժւական պետութիւնը ծառայում է պրօլետարիատի շահագործման համար, պրօլետարիատը, վերցնելով իշխանութիւնը իր ձեռքը, իր՝ պրօլետարական պետութեան միջոցով կապում է բուրժւազիային հեաբաւորութիւն շատրով նրան իր զիմ պայքար մղելու։

19. Պրօլետարիատի դիկտատուրան, բացի բուրժւազիային ճնշելուց ուրիշ էլ ի՞նչ խնդիրներ ունի կատարելու։

Իրականացնել տնտեսական յեղափոխութիւնը։ Պրօլետարական պետութեան կողմից վերցնում են բուրժւայիայից արտադրութեան բոլոր միջոցները, որոնք դառնում են հասարակութեան սեփականութիւն։ Որպէսզի չըստացի թալան կամ բաժանում, պէտք է կազմակերպւած ուժ, ինչպիսին է պրօլետարական պետութիւնը։

20. Արգեօր միշտ էլ գոյութիւն է ունենալու պրօլետարիատի դիկտատուրան։

Ո՞չ սա միայն անցողակի շրջանի իրաւակարգն է։ Բուրժւազիայի դիմադրութեան թուլացման հետ միասին հետզհետէ կսկսի մեռնել նաև պրօլետարիատի դիկտատուրան։

21. Ի՞նչ տարբերութիւն կա բուրժւական և պրօլետարական անտեսութիւնների միջև։

Նախաղծւած կազմակերպութիւնը՝ Որպէս զի վերջ տրւի արտադրութեան մէջ իշխող անարխիային (անկարգութեանը), և որը հասցըրեց մըցման ու համաշխարհային պատերազմին; ապրանքների արտադրութիւնը այսուհետև լինելու է նախօրօք գծւած մի պլանի համաձայն, կանոնաւորապէս կազմակերպւած և որը իրականանալու է ոչ թէ վախից, այլ նրա նպատակայարժմարութեան դիտակցելուց։

22. Ի՞նչ առանձնայատկութիւններ կան կոմունիստական և էապիտալիստական հասարակարգերի միջև։

Ամբողջ մարդկութեան զարգացումը։ Ամբողջ էներգիան, որ գնում էր մինչ այդ դասակարգային կուի՝ գործագույների, պատերազմների, յիդափոխութեան և նրա ճնշումների (պետական իշխանութեան համար) վրա, այսուհետև կզնա ընդհանուր ստեղծագործական աշխատանքի, որը տարւելու է մեծամեծ ֆարբիկաների, զաւողների, գիւղատնտեսական ամենակատարելագործւած մեքենաների և գործիքների վրա։ Եյսպիսով բոլորն էլ անհամեմատ ըիշ են աշխատելու, կոմունիստական հասարակութեան բոլոր անդամներ իրեց ազատ ժամանակը հընարաւորութիւնը լուսանան գործադրելու զի-



տութեամբ, գեղարւեստով և այլն գրադեկուլքա: Ապրաներների առատութիւնը հնարաւորութիւն կտա բաւարարելու բոլորի էլ պահանջները:

### III. ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ - ԶՐՈՅՑ

Ինտերնացիոնալը և Ռ. Կոմ. Կուսակցութիւնը. Ինտերնացիոնալը, նրա ծագումը, խընդիրները-կազմակերպութիւնը, կապւած Ռուս. Կոմ. Կուսակցութեան պատմութեան հետ: III-րդ Կոմունիստական Ինտերնացիոնալի նշանակութիւնը և Ռուս. Կոմ. Կուսակցութեան պատմական նպատակը:

1. Ջատ ժամանակ է, ինչ պրօլետարիատի բուրժւակիայի մէջ ընթանում է պայքար:

Այն օրից, երբ գոյութիւն ունեցան ֆարբիկաներ և զաւօգներ, երբ գոյութիւն ունի կապիտալիզմ՝ բանւորները ձգտել են շարունակ ազատւելու շահագործումից և կապիտալի դէմ սկայքարելու համար՝ միանալու պրօֆեսիոնալ միութիւններով և քաղաքական կուսակցութիւններով:

2. Աշխատաւորները իւրաքանչիւր երկրում առանձին հանդէս գալով կարող են արդեօք յաղթել քաղաքացիական այս կուում:

Աչ, չեն կարող: Եթէ բանւորները յաղթում են մի երկրի բուրժւակիային, իսկոյն մի-

իւս երկրի բուրժւազիան կզա օգնութեան այն  
պետութեան, որտեղ բուրժւազիան յաղթւել է:  
Եթէ բոլոր երկրների բանւորները գործեն մի-  
տեհեղ և կազմակերպւած, նոր միայն բուրժւա-  
զիան կրոնի դիջողութիւնների ճամբան:

3. Ճատ ժամանակ է արդեօք, երբ դանա-  
գան երկրների բանւորները գիտակցեցին, որ  
իրանց ոյժը միութեան մէջ է:

Դեռ 1741 թւին բանւոր դասակարգի Մեծ  
առաջնորդ Կարլ Մաքրոսը էնգելսի հետ միասին  
զրեց՝ Կոմունիստական Մանիֆեստը, որտեղ և  
առաջադրւեց «Պրոլետարներ բոլոր երկրների,  
միացէք», լօդունդը: Լոնդոնում՝ Անգլիայի մի-  
ջազգային ցուցահանդէսում՝ հանդիպեցին տար-  
բեր երկրների բանւորներ: Այն ժամանակ պարզ  
երեաց, որ բոլոր երկրների բանւորները միա-  
տեսակ ծանր դրութեան մէջ են: Անգլիական  
բանւորները գանգատւեցին, որ գործադուլի  
ժամանակ գործարանատէրները վարձեցին ֆրան-  
սիացի բանւորներ և գործադուլը տուժեց:  
Փրանսիական բանւորները պատասխանեցին, որ  
իրենք չգիտէին, թէ Անգլիայում գործադուլ է  
և որ իրենք գնում են իրենց ընկերների դէմ:

Ակնկրն դարձաւ ամբողջ պրոլետարիատի  
համերաշխ գործելու անհրաժեշտութիւնը:

4 Ի՞նչպէս յաջողւեց հիմնելու տարրիր եր-  
կրների բանւորական միութիւն:

1864 թւին Լօնդոնում հիմնւեց Լին բան-  
տորական միջազգային ընկերութիւնը, այսպէս  
կոչւած Առաջին Ինտերնացիոնալը. որը գոյու-  
թիւն ունեցաւ 12 տարի, տարածելով բոլոր  
երկրների բանւորութեան մէջ յեղափոխական  
պայքարի համար սիացման անհրաժեշտութեան  
միտքը:

5. Ի՞նչու ընկաւ Լին Ինտերնացիոնալը:

Ենակեղ շկար գաղափարների սիակերպու-  
թիւն և չնայելով որ նրա մէջ շատ կային զա-  
նազան երկրների բանւորների առաջնորդներ,  
բայց բուրժւական մասսանները շատ քիչ գի-  
տէին նրա մասին: 1871 թւին Առաջին Ինտեր-  
նացիոնալի անդամները մասնակցութիւն ունե-  
ցան Պարիզի բանւորական շարժման մէջ (Պա-  
րիզեան կոմունա) և երբ բուրժւագիան ճշնեց  
այդ ապստամբութիւնը, Ինտերնացիոնալին հե-  
տապնդելը բոլորովին կանգնեցրեց նրա գոր-  
ծունէութիւնը, որ առանց էղ էլ լքւած էր ներ-  
քին տարածայնութիւններից:

6. Ե՞րբ և ի՞նչու հիմնւեց երկրուդ Ինտեր-  
նացիոնալը:

Առաջին Ինտերնացիոնալի անկումից յետո  
արդիւնաբերութեան զարգացման հետ միասին  
տարբեր երկրներում առաջանում են սոցիալիս-  
տական կուսակցութիւններ: Նրանց անջատ գոր-  
ծունէութիւնը համաձայնեցնելու համար 1889

թւին Պարիղում զումարւում է Միջազգային Սոցիալիստական Կոնգրեսը (ՀՀՀ) և այնտեղ հիմնում է Երկրորդ Ինտերնացիոնալը (որը գոյութիւն ունեցաւ մինչև 1914 թիւը), որը Մայսի 1-ը յայտարարեց բանւորութեան կազմակերպութեան օր, մշակեց իսկական սոցիալիստական ծրագիր և իր բոլոր նիստերում բացառակ կերպով արտայայտեց զինւած ուժի և իմպերալիստական պօլիտիկայի դէմ:

7. Ե՞րբ և ինչու ընկաւ Երկրորդ Ինտերնացիոնալը:

Նրա գոյութեանը վերջ տւեց 1914 թիւ համաշխարհային պատերազմի: Զանազան երկրների սոցիալիստական կուսակցութիւնները դաւաճանեցին Ինտերնացիոնալին: Փոխանակ տապալելու իրենց բուրժւական պետութիւնները, նրանք անցան նրանց կողմը և սկսեցին աջակցել իմպերալիստական պատերազմին:

8. Ինչու սոցիալիստական բանւորական կուսակցութիւնները դաւաճանեցին Ինտերնացիոնալին:

Որովհետեւ բուրժւագիան իր մեծաքանակ եկամուտներէց՝ որ ստանում էր իր բռնազըրբաւծ վայրերը թալանելուց, բաժին էր հանում վարժւած (և ալիքագրութեան) բանւորներին, որոնք, ինչպէս և իրենց առաջնորդները, եկան այն համոզմունքին, որ բանւոր դասա-

կարգն ևս շահագրգուած է բուրժւագիայի նը-  
ման բոնագրաւման պոլիտիկայով, իբրև աշխա-  
տավարձի լրացում:

9. Ի՞նչ մասերի բաժանւեց երկրորդ ին-  
տերնացիոնալը:

Եթեր հոսանքի: Բոլոր երկրներում սոցիա-  
լիստական կուսակցութիւնները բաժանւեցին  
երեք ճիւղի՝ ա) սոցիալ-շովինիստներ, բ) կենտ-  
րոն և գ) կոմունիստներ:

10. Ի՞նչ են բարողում սոցիալ-շովինիստ-  
ները:

Սոցիալ-շովինիստները բանւոր գասակար-  
դի բացարձակ դաւաճաններն են, որոնք բարո-  
ղում են օգնել բուրժւական պետութեանը, շա-  
հագործողների, «հայրենիքի» պաշտպանութիւն  
և այլն: Այսպէս են օրինակ Կերենսկին և Ծե-  
րեթելին Ռուսաստանում, Յէլյէմանը՝ Գերմանի-  
այում:

Ո՞վքեր են «Կենտրոն» սոցիալիստները:

Նրանք են, որ օրօրւում են կոմու-  
նիստների և սոցիալ շովինիստների միջև, ցան-  
կանում են պրօլետարիատին հաշտեցնել բուր-  
ժւագիայի հետ և այսպիսով թուլացնելով նրա  
եռանդը՝ դաւաճանում են նրան: Այս սոցիալ  
մատնիչների թիւն են պատկանում օր.  
Մարտովը-Ռուսաստանում, Կառուտսկին՝ Գերմա-  
նիայում:

12. Այժմ գոյութիւն ունի արդեօք երկրորդ ինտերնացիոնալը:

Միմիայն իրքն «ազգերի Լիգայի» աւագակ կապիտալիստների միութեան մի կանոնարա:

Մի բանի անդամ սոցիալ-մատնիշները աշխատեցին վերականգնել նրան։ Սյս բանը նըրանց շահողուեց, այլ աւելի շատ բանւորական մասսաներ միացան III-դ ինտերնացիոնալի հետ։

13. Ո՞ւժից կազմեց III-դ ինտերնացիոնալը:

III-դ ինտերնացիոնալին միացան այն սոցիալիստները, որոնք կուի հենց սկզբից զիտակցեցին, որ աջակցել իրենց բուրժւազիալին, —նշանակում է վաճառել ամբողջ բանւոր զասակարգը՝ որի պարտականութիւնն է խորտակել հենց այդ բուրժւազիային։

14. Ո՞ր կուսակցութիւնները հաւատարիմ մնացին բանւոր դասակարգին։

Խուսափանում բոլշևիկների կուսակցութիւնն էր, որը հենց 1914 թվից յայտարարեց կուի՝ կուի դէմ և սուաջարկեց քաղաքացիական պատերազմ՝ իրքն հետևանք իմպերիալիստական կուի։ Կերմանիայում սոցիալիզմին հաւատարիմ մնաց միայն սպարտակ կուսակցութիւնը՝ զլուխ ունենալով Կարլ Լիրկնեխտին և Թօդա Լիւքսենբուրգին։ Միւս երկներում

Էւ հին կուսակցութիւնների բաժանումից առաջացան ձախերը, որոնք և կանգնեցին յեղափոխութեան կողմը:

Ե՞րբ և ինչպէս հիմնւեցան այս կուսակցութիւնները:

Ճվեցարիայում, դեռ ևս համաշխարհային պատերազմի ժամանակ, երկու խորհրդակցութիւններում վորձեր եղան միանալու: Մուսաստանում՝ չոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետո, երբ իշխանութիւնը վերցրին բանտորներն ու գիւղացինները, բոլշևիկները, այսպիսով դառնալով համաշխարհային յեղափոխութեան կենտրոնը, ընդունելով կոմունիստ անունը, գարձան նրա առաջին զօրամասը: Մուսական յեղափոխութեան ազգեցութեան տակ ուրիշ երկը. ներում էլ կազմւեցին կոմունիստական կուսակցութիւններ: 1919 թւի սարտ ամսին Մոսկվայում գումարեց զանազան երկրների կոմունիստական կուսակցութիւնների առաջին նիստը և այնտեղ հիմնեց ԱՄ-ըդ Կոմունիստական Ինտերնացիոնալը:

16. Ինչու բոլշևիկական և միւս կուսակցութիւնները վերանւանւեցին «Կոմունիստների» կուսակցութիւն և ինքը՝ Երբորդ Ինտերնացիոնալը իրեն «կոմունիստական» անունը տևեց:

Որպէսզի հենց անունով էլ յայտնի լինի, որ իրենք հաւատարիմ մնացին Կարլ Մարքսի պատ-

դամներին, որ «անխնա կռիւ կապիտալիստների դէմ»-ի ճանապարհով են գնում, ինչպէս նոյնը յայտաբարեց «Կոմունիստական Մանիֆեստը» գեռ ևս 1847 թւին։ Մէկ էլ նրա համար, որ արդէն սոցիալիստ խօսքը բոլորովին խայտառակւել էր բանւոր դասակարգի դահիճ Կերենսկու, Շեյգէմանանի և նմանների կողմից։

17. Ի՞նչու էր Կոմունիստական կուսակցութիւնը տուած բոլշևիկեան կուսակցութիւն կոչւում։

Սա առաջացաւ Թուսաստանի Սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնից, որը կազմակերպւեց 1897 թւին, իսկ 1903 թւին, Լոնգօնուս Ռ. Վ. Դ. Բ. կուսակցութեան երկրորդ համաժողովի ժամանակ առաջացաւ անջատում՝ մի մասը կողմնակից էր բուրժւակիայի հետ համաձայնութեան դալու, իսկ միւսը՝ դէմ էր։ Ժողովում ներկա գտնւողներից առաջինները քիչ էին, ուստի և ձայնատւութեան ժամանակ երկրորդները շատ ձայն սոտացան։ Առաջինները կոչւեցին «փոքրամասնականներ» (մենշերիկներ), իսկ երկրորդները՝ «մեծամասնականներ» (բոլշևիկներ)։

18. Ի՞նչ տւեց Կոմունիստական Ինտերնացիոնալի Ա-րդ համաժողովը (կոնգրես)

Երկրորդ համաժողովը, որ կայացաւ Մոսկվայում՝ 1920 թւի յուլիսին, տւեց Ինտերնա-

ցիոնալի՝ աշխատանքների գումարը՝ սկսած 1-ին  
համաժողովից։ Պարզէց, որ այս թիւն կոմու-  
նիստական ինտերնացիոնալը ձեռք է բերել զա-  
նազան երկրների ամենամեծ բանւորական կու-  
սակցութիւնները և որ նոյն իսկ համաձայնողա-  
կան կուսակցութիւնների առաջնորդները, որ-  
պէսզի խարեն բանւորներին, ներկւում են կո-  
մունիստների դոյնով։

19. Ո՞րոնք են ԱՌ-ը կոմունիստական ին-  
տերնացիոնալի Ա-ը համաժողովի գլխաւոր  
որոշումները։

Այդտեղ մշակւել և ընդունւել է Ինտերնա-  
ցիոնալի կանոնադրութիւնը, այսինքն, որոշում  
այն մասին, թէ ումսից պիտի կազմի ինտեր-  
նացիոնալը, ինչպէս հաւաքւել, ով է նրան ղե-  
կավարում, և ո՞ր կուսակցութիւնները իրաւունք  
ունեն նրա մէջ մտնելու։

Որոշեց Կոմունիստական կուսակցութեան  
մէջ ընդունել սիայն այն կուսակցութիւնները,  
որոնք ոչ թէ խօսրով, այլ գործով ցոյց են տը-  
ւել և տալիս են իրենց պրօլատարիատին նիբր-  
ւած լինելը։ Յայ նկատի են առնւել կարեոր  
ցուցմունքներ, թէ ինչպէս և ո՞ր երկրում պէտք  
է մնան կոմունիստական կուսակցութիւններ։

20. Ի՞նչ նշանակութիւն ունին Ա. Կոմ.  
կուսակցութիւնը և կոմունիստական ինտերնա-  
ցիոնալը՝ համաշխարհային յեղափոխութեան մէջ։

Կոմունիստական ինտերնացիոնալը չամաշխարհային Յեղափոխութեան համար մի շտաբ է հանդիսանում, որը զիկավարում է բոլոր երկրների յեղափոխական բանւորութեանը։ Մուսաստանի Կոմունիստական կուսակցութիւնը—սա կոմունիստական ինտերնացիոնալի առաջապահիկ գունդն է (авангард)։ Սա առաջինն էր, որ բարձրացրեց նրա գրօշակը «բոլշևիկեան վարակումը»։ Մուսաստանի Կոմունիստական կուսակցութիւնը պրոլետարիատի համար մի փարոս է և կռւում էլ՝ հենարան։

#### IV. ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ – ԶԲՈՅՑ

Խորհրդային շինարարութիւն.

Խորհրդային իշխանութիւնը իրքն պրոլետարիատի զիկտատուրայի ձև (կոնստիտուցիա P. C. F. C. R.) Խորհրդային իշխանութեան արտաքին քաղաքականութիւնը և ազգերի ինքնորոշման իրաւունքը։ Զօրքը, Միլիցիա, Ըրտուկարդ Յանձնաժողովները, Գատարան։

1. Մուսաստանում պրոլետարիատը ինչ ձեռք վերցրեց իշխանութիւնը՝ ի՞ր ձեռքը։

Խորհուրդների միջոցով։ Դեռ ևս 1905 թ., և ապա 1917 թւին բուրժւագիայի դէմ պայքարելու համար ծագեցին բանւորների և պինորների խորհուրդներ։ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը յաղթութիւն տւեց «ամբողջ իշխա-

նութիւնը Խորհրդիներին» լոգունկին և բանւոր-ների, գիւղացիների և զինւորների Խորհուրդնե-րը կանգնեցին իշխանութեան զլուխը:

2. Ի՞նչի համար են ծառայել և ծառայում Խորհուրդները պրօլետարիատին:

Պրօլետարիատի պիկտատուրայի իրակա-նացման համար, որ բոլոր իրաւունքներով օգ-տուի միայն պրօլետարիատի: Բանւորա-դիւղա-ցիական իշխանութեան մէջ բուրժւազիան տեղ չունի:

3. Ուրեմն Խորհրդային իշխանութեան ժա-մանակ գեմոկրատիա չկա (բոլոր քաղաքացինե-րի հաւասարութիւն):

Խորհրդային իշխանութիւնը իրականացը-նում է պրօլետարական դիկտատուրան: Բան-ւորներն ու զիւղացիները, իրենց Խորհուրդների արհեստակցական միութիւնների զործարանա-յին կոմիտէների միջոցով կառավարում են եր-կիրը: Խակ Խորհրդային իշխանութիւնը յալտա-րարում է բուրժւազիային՝ որ նրան թոյլ չփ-տա նոյն իսկ իշխանութեանը մօտ գալու:

4. Ի՞նչ է բուրժւական գեմոկրատիան:

Հարուստների փոքրիկ խմբակը — բուրժւա-գիան չի կարող պարզօրէն զիտակցել՝ որ կա-ռավարում է միլիոնաւոր աշխատաւորներ: Սրա համար էլ նա խարում է աշխատաւորութեանը, որ ինքը կառավարում է ամբողջ ժողովրդի ա-

նունից, իսկ գործնականօրէն տալիս է նրան ի-  
բաւունքներ միայն թղթի վրա:

5. Ի՞նչ է անում Խորհրդային Իշխանու-  
թիւնը, որպէսզի աշխատաւորութիւնը հնարա-  
ւորութիւն ունենա իրականացնելու իր իրա-  
ւունքները:

Որպէսզի աշխատաւորները ազատօրէն կա-  
րողանան հաւաքւել և կազմել իրենց միութիւն-  
ները—նրանց տրամադրութեան տակ են դրւում  
բոլոր լաւ շնորհը, որպէսզի նրանք կարողա-  
նան ազատօրէն արտայայտել իրենց կաթօր-  
ները—նրա ձեռքում են կենտրոնանում բոլոր  
տպարանները և հրատարակութիւնները. ամբողջ  
աշխատաւորութիւնը ապահովւում է, դիտակ-  
ցութեան հասնելով ձրի կրթութեամբ:

Բոլոր աշխատաւորներն են հաւասար իրա-  
ւունքներով օգտուում:

Այս: Խորհրդային Իշխանութիւնը կին-աշ-  
խատաւորին կամ գեղջկուհուն տալիս է տղա-  
մարդուն հաւասար իրաւունքներ, ամեն տեղ  
կանայք հաւասարւած են, պարտաւոր են մաս-  
նակցել պիտութեան կազմակերպչական գոր-  
ծին: Դրա համար էլ Խորհրդային Իշխանութիւ-  
նը որպէսզի նբան հնարաւորութիւն տա հաւա-  
սարւելու տղամարդուն, ազատում է կնոջը տը-  
նային տհափունքի լինելուց: Խորհրդային Իշխա-  
նութիւնը նոյնպէս և տարրեր ազգերի աշխա-

տաւորութեան կամ տարրեր հաւատքների բաժանում չի անում:

7. Ի՞նչպէս է կազմում Խորհրդային իշխանութիւնը:

Այնպէս, որպէսզի տեղերում ամենալայն աշխատաւոր մասսաները նրա մէջ լայն մասնակցութիւն ունենան, որով միաժամանակ երկիրի առանձին մասերը կապւում են կենդրոնական իշխանութեան հետ:

8. Խորհուրդներում ովքեր իբաւունք ունին ընտրելու և ընտրւելու:

Բոլոր աշխատաւորները՝ Ռէբիշի աշխատանքով ապրողները խորհուրդներում ընտրելու և ընտրւելու տեղ չունեն:

Ի՞նչ ձեռք է կազմակերպւում Խորհրդային իշխանութեան շինարարութիւնը:

Խորհրդային իշխանութիւնը ցածից է կազմակերպւում: Գիւղական Խորհուրդներից գումարւում է գիւնակային (волостной) կամ գաւառամասային (участковый) համաժողով, որն իր միջից ընտրում է գործադիր կոմիտէ (уездсполком), Գաւառամասային խորհուրդներից գումարւում է գաւառային (уездный) համաժողով, սա էլ իր միջից ընտրում է իր գաւառային գործադիր կոմիտէն (уездсполком): Գաւառայիններից գումարւում է նահանգային համաժողով (губисполком) և գերջապէս նահանգայիններից

Համառուսական Խորհուրդների համագումար, որը պետութեան մէջ բարձրագոյն իշխանութիւնն է հանդիսանում:

10. Ա՞վ է կառավարում երկիրը մինչև խօրհուրդների համագումարը:

Համառուսական Կենտրոնական գործադիր կոմիտէն (В. Р. П. Исп. Ком.) և ժողովրդական կոմիսարների խօրհուրդը (Совнарком) ուղարկ ընտրւած են Խորհուրդների Համառուսական Համագումարում:

11. Ի՞նչ դեր են կատարելու Խորհուրդների անդամները:

Նրանք ոչ միայն պարտաւոր են ձայն տալ և ընդունել այս կամ այն պաշտօնը, ալիև այն, որ նրանք բոլոր որոշումները իրենք են իրականացնում կեանքում: Այսպէս օր՝ Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի անդամները աշխատում են ժողովրդական Կոմիսարիատներում՝ նրա բաժիններում: Այսպիսով Խորհուրդները չեն կարող կտրւել մասսաններից: Բացի այս, ընտրողները միշտ էլ կարող են իրենց ուզած ժամանակ ետ կանչել խօրհուրդներից իրենց պատգամաւորներին՝ փոխարինելով նրանց նորերով:

12. Ի՞նչ դեր են կատարում տեղական խօրհուրդները (նահանգային, գաւառային, գաւառամասային և գիւղական):

Ենթարկւելով բարձր խորհուրդներին, տեղական խորհուրդները վճռում են տեղական նշանակութիւն ունեցող բոլոր հարցերը: Նա իր որոշումները անցկացնում է իր բաժինների միջոցով: Իւրաքանչիւր բաժին ենթարկւում է տեղական գործադիր կոմիտէին, բայց այս՝ նա կատարում է վերի՝ իր համապատասխան բաժնի բոլոր հրահանգներն, կարգադրութիւններն ու ցուցունքները (համապատասխան ժողովը դական Կոմիտարիատի):

13. Ո՞րտեղ են յայտարարւած Խորհրդային իշխանութեան բոլոր օրէնքները:

Թուսաստանում Սոցիալիստական ֆեդերատիւ Խորհրդային Հանրապետութեան օրէնսդրում (Կոնստիտուցիա [P. C. F. C. P.]): Այնտեղ ամեն ինչ վերլուծւած է, այնտեղ յայտարարւում է նոյնպէս, որ այս բոլորը ժամանակաւոր են, ինչպէս և ամեն՝ մի իշխանութիւն՝ մինչև մարդը մարդուց շահագործւելու ոչնչացումը:

14. Ի՞նչպէս է վերաբերւում Խորհրդային իշխանութիւնը տարբեր ազգերին:

Նա ընդունում է տարբեր ազգերի հաւասարութիւնը՝ և տալիս է նրանց ինքնորոշման ազատ իրաւունք, նոյն իսկ մինչև բաժանւելը և ինքնուրոյն պետութիւն կազմելը օր. Աւկրայնա, Բաշկիրների հանրապետութիւններ), Իւրաքանչիւր ազգ կարող է աղատօրէն դարդանալ,

ունենալ Խորհուրդներ, դպրոցներ իրեն՝ լեզով։  
Հենց ինքը, Թուսաստանը, հանդիսանում է տար-  
բեր ազգերի Խորհրդային հանրապետութիւն-  
ների մի ազատ գաշնակցութիւն (Փեղերացիա)։

15. Խոկ ինչպէս է վերաբերում Խորհրդա-  
յին իշխանութիւնը միւս պետութիւններին։

Խորհրդային իշխանութիւնը իր գոյութեան  
հէնց սկզբում իր կողմից ամեն տեսակի քայլեր  
արաւ խաղաղութեան հասնելու համար, նա  
ընդառաջ զնաց ամեն տեսակի գիշումների  
(Քրեստի հաշտութիւնը). Խորհրդային իշխա-  
նութիւնը երբէք չի ցանկանում խլել ուրիշի  
երկրամասերը և չի էլ ցանկանա բռնի փաթա-  
թել Խորհրդային իշխանութիւնը ուրիշ ազգե-  
րի վզին։

16. Ի՞նչու համար մեզ մօտ գոյութիւն ունի  
բանակ։

Բանւորութեանը և գիւղացիութեանը ներ-  
քին և արտաքին հակայեղափոխութիւնից պաշտ  
պանելու համար, և միւս երկրների պրօլետար-  
իատին օգնելու համար՝ բուրժւազիայի հետ  
ունեցած կուռում։

17. Բոլոր բաղաքացիներն են կատարում  
իրենց զինւորական պարտականութիւնը զօրքի  
մէջ։

Ո՞չ։ Մեր բանակը-բանւորա-գիւղացիական  
Կալմիկ բանակն է և Խորհրդային իշխանու-

թիւնը աշխատաւորութեան շահերը պաշտպանելու համար զինակոչի է են թարկում միսիայն աշխատաւորութեանը։ Թուրքւագիան իր զինուրական պարտականութիւնները կատարում է միայն թիկունքի զինման մէջ։

18. Կարմիր բանակում ում է պատկանում էշխանութիւնը և ովքեր են նրա հրամանատարները։

Իրենց—բանւորներին և գիւղացիներին։ Այնտեղ, որտեղ ստիպւած ենք դնել հին օֆիցիեներին՝ գործադրելու իրենց գիտութիւնը հրամանատարական պաշտօններում, այնտեղ նրանց վրա նշանակում է կանորոլ՝ ի դէմս քաղաքական կոմիսարների—դարձեալ բանւորներից և գիւղացիներից։

19. Ի՞նչումն է Կարմիր բանակի ուժը։

Իր գիտակցութեան մէջ։ Կարմիր բանակը կատարելիք պարտականութիւնները գիտէ ամեն մի Կարմիր բանակային։ Նա բուրժւագիայի բանակի նման խարէութեամբ չի կապւած։ Կարմիր բանակի զինւորները կատարում են հրամանները ոչ թէ վախից, այլ խղճից, որովհետև նրանք շատ լաւ գիտեն աշխատաւորների շահերը պաշտպանելու անհրաժեշտութիւնը։

20. Ի՞նչ է ընդհանուր զինտվարժութիւնը (Առօցոց)։

Աշխատաւորների ընդհանուր զինավարժու-

թիւնն է այս: Բոլոր աշխատաւորներ՝ առանց կտրւելու արտադրողական աշխատանքից, պէտքէ վարժւեն զինւորական գործին, այնպէս որ ամբողջ աշխատաւոր ժողովուրդը փոխւելու է բանւորագիւղական միջիցիայի և իւրաքանչիւր բաղաք, իւրաքանչիւր վիճակ հնարաւորութիւն ունենան պաշտպանելու ցանկացած բոպէին:

21. Ի՞նչ բան է Արտակարգ Յանձնաժողովը (Վ. Կ.). Ի՞նչպէս պէտք է նրան վերաբերել.

Արտակարգ Յանձնաժողովը—հակայեղափոխութեան, սաբուտաժի, լրտեսութեան և չարագործութեան գէմ կուելու համար է, և հետեւ է բուրժւագիայի դադտնի աշխատանքին, որը փորձում է խորտակել Խորհրդային իշխանութիւնը: Արտակարգ Յանձնաժողովն է յեղափոխութեան հաւատարիմ պաշտպանը, որի համար էլ աշխատաւորները պարտաւոր են օգնել նրան բուրժւագիայի հետ ունեցած կուում:

22. Խորհրդային իշխանութեան մէջ ի՞նչ դատարան գոյութիւն ունի:

Միասնական Ժողովրդական դատարան և Յեղափոխական Ցըիրունայ: Միասնական Ժողովրդական դատարան եկած գործը հենց այնտեղ էլ վճռուում է, այնպէս որ, եկած գործի և վճռի ժամանակամիջոցը կարճ է: Ժողովրդական դատաւորները ընտրւում են միայն աշխատա-

ւորներից։ Որպէսզի հակայեղափոխականներին դատեն անխնա և արագ, դատաւորներն նշանակում են և ոչ թէ ընտրում։ Փողովրդական դատարանների հետ կան նաև Տրիբունալներ։

23. Ի՞նչպիսի դատեր և ինչ պատիժներ կան պրօլետարական դատարանում։

Պրօլետարական դատարանը ոչ թէ դատում է գրած օրէնքների համաձայն, որոնք եղբէք չեն խդում կեանքի վրա, այլ յեղափոխական խղճի համաձայն։ Պատիժները՝ համեմատած բուրժւագիայի դատերի հետ, չափազանց մեղմ են. երեմն զործադրում է հասարակական ար համարհանք, հասարակական պարտադիր աշխատանքներ՝ — փոխանակ բանդարկութեան և պայմանական պատիժների։

## Վ. ԴԱՍԾԽՕՍՈՒԹԻՒՆ — ԶՐՈՅՑ

### Խորհրդային շինարարութիւն

Երտադրութեան կազմակերպումը (Փողովրդական տնտեսութեան խորհրդներ, կենդրանուներ, զաւկոմիներ), միասնական արդիւնաբերութիւն, պրօֆ-միութիւնների գերը, աշխատանքի բանակներ, աշխատանքի զինումը, (միլիտարիզացիա երանակ), ֆինանսներ. Երտաքին առևտուրը։ Աշխատանքի ապահովումը — առողջապահութիւն. Սոցիալական ապահովութիւն։

1. Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից ետո

Խորհրդային իշխանութիւնը ինչպէս վարւեց կապիտալիստների, ֆարբիկաների և զաւողների հետ:

Նա խլեց բուրժուազիայից արտադրութեան բոլոր միջոցները, որը բանւորները ոչ թէ բաժանեցին իրաք մէջ, այլ յանձնեցին իրենց պրօլետարական պետութեանը — իրենց ամենամեծ կազմակերպութեան ձեռքը, կամ ինչպէս առում են՝ պետականացրին նրանց:

2. Իմպերիալիստական կուրից և Կերենսկուց ետո ի՞նչ ժառանգութիւն մնաց պրօլետարիատին:

Ամբողջ տնտեսութեան կատարեալ քայլայումը: Ամբողջ արդիւնաբերութիւնը աշխատում էր միայն պատերազմի համար, չկային բանւոր ձեռքեր, քայլայտն էին փոխադրութեան միջոցները (транспорт), չկար ամենաէականը՝ հումնիւթը, վառելիքը և պարենալումը:

Ի՞նչպէս կարելի էր յաղթել քայլայմանը:

Դրա համար պէտք է սկզբից ձեռք բերէր նաւթ, ածուխ և հաց, ինչպէս և այդ արեց Կարմիր Բանակը: Հիմա մնում է լաւ հողի վրա զնել արդիւնաբերութիւնը, ամբողջ տնտեսութեան արտադրողականութիւնը պիտի բարձրացնել, որը տարւելու է միամնական ծրագրով (պլանով):

\* \* \* Ի՞նչու համար պէտք տնտեսութիւնը

միասնական կանոնադրութեամբ տանել և յառ-  
կապէս ո՞րով:

Որպէսզի վերջացնենք անկանոնութիւնը,  
ուժի և մարի անհաշիւ ծախսումը: Մենք սկը-  
սում ենք հաշւի առնել այն ամենը, ինչ որ ու-  
նենք, որով կարող ենք անցնել գործի. «Սոցի-  
ալիզմն է հաշւէառութիւն». ասաց ընկ. Լենինը:  
Ամբողջ արդիւնաբերութեան վարչակազմը պէտ-  
քէ բղխի մի կենդրոնից, որպէսզի տնտեսութեան  
առանձին ճիւղերը համաձայնաբար գնան կեն-  
դրոնի մշակած պլանով:

5. Մեզանում ո՞վ է կանգնած արդիւնաբե-  
րութեան գլուխը:

Փողովրդական տնտեսութեան բարձրա-  
գոյն խորհուրդը (совнархօզ), որը կազմւած է  
պրօֆեսիոնալ միութիւնների և ժողկոմների  
Խորհրդի ներկայացուցիչներից. Արդիւնաբե-  
րութեան տարբեր ճիւղերը, որոնք ենթարկվում  
են նրան, միաւորւում են «պլանառների» և  
«կենդրոնների» մէջէ (օր. պլանածուխը՝ միացնում  
է ածխի ամբողջ արտադրութիւնը), կենդրոնա-  
կանը ամբողջ տնայնագործական արդիւնաբերու-  
թիւնը:

6. Ցեղերում արդիւնաբերութիւնը ինչ վար-  
չակազմ ունի:

Խրաբանչիւր զաւոդի գլխին կանգնած է  
զաւոդի վարչութիւնը, որի մէջ են մտնում բան-  
տրները և ինժեներ – մասնագէտնէր, որոնք ու-

դարկւում են այդտեղ համապատասխան պրօֆ  
միութեան համաձայնութեամբ։ Զաւողի վար-  
չութիւնը, աշխատելով տեղական ժող։ Տնտե-  
սութեան Խորհրդի հետ համաձայնաբար, են-  
թարկւում է իր «զլխաւորին», կամ կենդրոնին։

7. Ո՞վ է պատասխանառու զաւողի կամ  
ֆաբրիկայի համար։

Այս պատասխանառութիւնը ոչ թէ ընկ-  
նում է կոլեկտիվի (մի քանի անձանց), այլ մի  
անձի վրա։ Այսպիսի (միանձնական) վարչակազ-  
մի որոշումը արագ է լինում (կոլեգիա եղած  
դէպքում ժողովների համար շատ ժամանակ է  
գնում) և խիստ պատասխանառութեան ան-  
համեշտութիւնը ակներև է դառնում։

8. Ի՞նչում է կայանում պրօֆեսիոնալ մի-  
ութիւնների գերը տնտեսութեան կազմակերպ-  
ման գործում։

Պրօֆեսիոնալ միութիւնները ստեղծւած են  
բուրժուական պետութեան դէմ կուելու համար.  
Հիմա, պրօլետարական պետութեան մէջ գնում  
են նրա (Խորհրդային իշխանութեան) հետ ձեռք  
ձեռքի տւած և որը պրօֆ-միութիւնների միջո-  
ցով իր պլանները կեանքի մէջ է իրականացը-  
նում։

Պրօֆեսիոնալ-միութիւնների զլխաւոր խըն-  
դիրն է արդիւնաբերութեան կազմակերպումը  
և արտադրութեան բարձրացումը։

9. Ի՞նչպէս է լինելու աշխատանքի դիսցիպ-  
լինան:

Նա պէտք է լինի գիտակցաբար և ընկե-  
րական. Մենք պէտքէ ստեղծենք հաշվառու-  
թիւն, մշակածի նորման, կուենք և կուելունք  
զանցառութեան դէմ, բայց այս դէպքում հիմ-  
